https://doi.org/10.46991/hc.2022.17.1.118

Անուշ Հարությունյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ,
ՀՊԹ գիտաշխատող-ֆոնդապահ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հիմնաբառեր. գաղափարական հոսանք, սոցիալ-դեմոկրատիա, «Հյումմեթ», ազատական հոսանք, Մահմեդականների համառուսաստանյան համաժողով, հայ-թաթարական բախումներ, «Հեյրաթ», «Դիֆայի», «Մուսավաթ», Մ. Է. Ռասուլզադե:

XX դարի սկզբին Արևելյան Այսրկովկասի մահմեդական մտավորականության շրջանում տարբեր գաղափարական հոսանքների և քաղաքական կազմակերպությունների առաջացումն այնպիսի ներքին ու արտաքին գործոնների հետևանք էր, ինչպիսիք էին Ռուսական կայսրության սոցիալ-տնտեսական ճգնաժամը, հեղափոխական շարժումները, պանթյուրքական և պանիսլամական գաղափարների տարածումը, հայ-թաթարական բախումները: Առաջացան երեք հիմնական հոսանքներ՝ սոցիալ-դեմոկրատական, ազատական և ազգայնական:

Սոցիալ-դեմոկրատական ուղղության առաջացումը կապված էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՍԴԲԿ) Բաքվի կոմիտեի և «Հյումմեթ» կուսակցության ստեղծման ու գործունեության հետ: Խորհրդային պատմագրության մեջ ընդունված է «Հյումմեթը» համարել ՌՍԴԲԿ մասնաճյուղ, մինչդեռ ժամանակակից ադրբեջանցի հեղինակներն այն ընդունում են որպես առանձին կուսակցություն: «Հյումմեթը» լայն գործունեություն էր ծավալում գործադուլային շարժմանը այսրկովկասյան թաթարների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ և կարողացավ իր կողմը գրավել ոչ միայն մեծ թվով թաթարների, այլև պարսիկների:

1905-1907 թթ. հեղափոխության շրջանում ձևավորվեց նաև ազատական ուղղությունը: Այս հոսանքի ակտիվացումը պայմանավորված էր երկու գործոններով՝ Ռուսաստանի մահմեդականների իրավունքների պաշտպանության համար սկսված շարժմամբ ու Այսրկովկասում Կադետական կուսակցական գործունեությամբ: Ազատական շարժումն Այսրկովկասում հետապնդում էր մահմեդականների ու քրիստոնյաների իրավունքների հավասարեցման, մայրենի լեզվով կրթության և լուսավորության նպատակներ, իսկ տեղական վարչակազմակերպական առավելագույն պահանջը մշակութային ինքնավարությունն էր:

Հայ-թաթարական բախումների արդյունքում առաջացավ ազգայնական հոսանքը: Ձևավորվեցին «Հեյրաթ» և «Դիֆայի» կուսակցությունները, հրատարակվեց ազգայնական բնույթի «Հայաթ» թերթը, որը ներծծված էր պանթյուրքիզմի ու պանիսլամիզմի

գաղափարներով, որոնք ուղղվում էին հայության դեմ: Ավելի ուշ ձևավորվեց ամենաազդեցիկ «Մուսավաթ» կուսակցությունը:

Anush Harutyunyan
PhD student at the Institute of Oriental Studies of the NAS of the RA,
Researcher at the History Museum of Armenia

THE EMERGENCE OF POLITICAL CURRENTS AMONG THE MUSLIMS OF EASTERN TRANSCAUCASIA IN THE EARLY 20TH CENTURY

Keywords: ideological current, social democracy, “Hummet”, liberal current, All-Russian congress of Muslims, Armenian-Tatar clashes, “Heyrat”, “Defai”, “Musavat”, M.E. Rasulzade.

The emergence of different ideological currents and political organizations in the early 20th century among the Muslim intelligentsia of the Eastern Transcaucasia was a consequence of the socio-economic crisis of Russian Empire, the revolutionary movement, the spread of pan-Turkism and pan-Islamism, the Armenian-Tatar clashes. Three main currents were formed: social-democratic, liberal and nationalistic.

The emergence of the social-democratic trend was associated with the Russian Social Democratic Labour Party’s (RSDRP) Committee of Baku and later with the formation and activity of "Hummet" party. In Soviet historiography "Hummet" was considered a RSDRP’s branch, while modern Azerbaijani authors consider "Hummet" a separate party. "Hummet" had a wide range of activities to involve Tatars in the strike movement and was able to take not only a large number of Tatars, but also Persians, into its side.

During the revolution of 1905-1907, a liberal movement arose, the activation of which was connected with two factors: the Movement for the defense of the rights of all Muslims in Russia and the activity of Cadet Party in Transcaucasia. The liberal movement pursued the goals of equalizing the rights of Muslims and Christians, education in the native language and enlightenment, while the maximum demand for local administration was cultural autonomy.

As a result of the Armenian-Tatar clashes the nationalist trend emerged. "Heyrat" and "Defai" parties were formed, "Hayat" newspaper was published, which disseminated the ideas of pan-Turkism and pan-Islamism, which were sharply directed against Armenians. Later the "Musavat" party was formed.

Ануш Арутюнян
аспирант Института востоковедения НАН РА,
научный сотрудник и хранитель фондов Музея истории Армении

ВОЗНИКНОВЕНИЕ ПОЛИТИЧЕСКИХ ТЕЧЕНИЙ СРЕДИ МУСУЛЬМАН ВОСТОЧНОГО ЗАКАВКАЗЬЯ В НАЧАЛЕ XX ВЕКА

Ключевые слова: идеологическое течение, социал-демократия, «Гуммет», либеральное течение, всероссийский съезд мусульман, армяно-татарские столкновения, «Гейрат», «Дефаи», «Мусават», М.Э. Расулзаде.

Возникновение разных идеологических течений и политических организаций в начале XX века среди мусульманской интеллигенции Восточного Закавказья было следствием таких внешних и внутренних факторов, как социально-экономический кризис Российской Империи, революционное движение, распространение идей пантюркизма и панисламизма, армяно-татарские столкновения. Сформировались три основные течения: социал-демократическая, либеральная и националистическая.

Возникновение социал-демократического направления было связано с Бакинским комитетом РСДРП и позже с формированием и деятельностью партии «Гуммет». В советской историографии «Гуммет» считался филиалом Российской социал-демократической рабочей партии (РСДРП), между тем современные азербайджанские авторы считают «Гуммет» отдельной партией. «Гуммет» имел широкий спектр деятельности с целью вовлечения закавказских татар в забастовочное движение и смог привлечь на свою сторону не только большое количество татар, но и персов.

Во время революции 1905-1907 гг. возникло и либеральное направление. Активизация этого течения была обусловлена двумя факторами: движением в защиту прав мусульман России и с деятельностью Кадетской партии в Закавказье. Либеральное движение преследовало цель уравнения прав мусульман и христиан, образования на родном языке и просвещения, а в местной административной сфере максимальным требованием была культурная автономия.

В результате армяно-татарских столкновений возникло националистическое течение. Сформировались партии «Гейрат» и «Дефаи», началась публикация газеты «Гайат», которая была полна идеями пантюркизма и панисламизма, резко направленных против армян. Позже сформировалось партия «Мусават».

* * *

Ներածություն: XX դարասկզբին Ռուսական կայսրությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական բուռն իրադարձություններն իրենց արձագանքը գտան նաև պետության ծայրամասերում, մասնավորապես՝ Այսրկովկասում: 1900-1903 թթ. տնտեսական ճգնաժամը, դրան հաջորդած 1905-1907 թթ. ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, վերջինիս ընթացքում սանձազերծված հայ-

թաթարական բախումները մեծ խթան հանդիսացան այսրկովկասյան ժողովուրդների հասարակական-քաղաքական շարժումների ակտիվացման համար: Այս երևույթը հատկապես նկատելի էր Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության շրջանում: Եթե դեռ նախորդ դարի վերջին տասնամյակներին այսրկովկասյան մյուս երկու հիմնական ժողովուրդների՝ հայերի ու վրացիների շրջանում ձևավորվել էին որակապես նոր քաղաքական կազմակերպություններ՝ կուսակցություններ, ապա Արևելյան Այսրկովկասի մահմեդականների շրջանում (որոնց պայմանականորեն, ինչպես ընդունված էր այդ շրջանի ցարական վավերագրերում, կանվանենք *թաթարներ*) գաղափարական հոսանքների ու կուսակցությունների ձևավորումը տեղի ունեցավ վերոնշյալ գործոնների ազդեցությամբ:

Հետազոտության կարևոր առարկա են ոչ միայն վերոնշյալ գործոնների ուսումնասիրումը, այլև տվյալ պահի պատմական-հասարակական միջավայրը, մտավորականության դերը, առաջացած հոսանքների գաղափարների տարածման և ընկալման հասարակական շերտերը: Նման գործոնների ուսումնասիրությունը կարևոր է XX դարասկզբին Այսրկովկասի հասարակական-քաղաքական պատկերի ամբողջացման, ազգամիջյան հարաբերությունների, արտաքին ազդեցությունների լուսաբանման առումով: Հետազոտությունը կատարվել է համադրելով և վերլուծելով ինչպես հայկական ու ռուսական, այնպես էլ ադրբեջանական ու թուրքական՝ վերոնշյալ խնդիրներին վերաբերող աշխատությունները, ինչպես նաև ժամանակի հայկական և թյուրքական մամուլի հրապարակումները: Նման ուսումնասիրությունը հարկավոր է նաև ներկայումս լայն տարածում գտած ադրբեջանական պատմական կեղծարարության բացահայտման ու լուսաբանման առումով:

Սոցիալ-դեմոկրատական հոսանք: Դեռևս 1898 թ. Ռուսական կայսրության տնտեսությունը անկայունության և անկման նշաններ ցույց տվեց, ինչն առավել խորացավ 1900 թ.՝ վերջ տալով նախորդ շրջանի նավթային «պայթյունի» առաջացրած արդյունաբերական վերելքին: Անհրաժեշտ է նշել, որ տնտեսական ճգնաժամն առաջացրեց էներգակիրների՝ ածխի ու նավթի գների անկում: 1899 թ. համեմատությամբ Բաքվի նավթային ընկերության արժետոմսերի գինը 1901-1902 թթ. անկում ապրեց շուրջ 67,4 %-ով (Раздорский, 2016, 49): Արդյունքում առաջացած գործազրկությունն ու բանվորների կրած դժվարությունները Բաքու քաղաքը դարձրին բանվորական անհնազանդությունների կենտրոն (Swietochowski, 1985, 37): Գործադուլային շարժումը այնպիսի չափեր ընդունեց, որ կառավարությունը 1902 թ. ուժեղացված ռազմական հսկողության տակ վերցրեց Բաքուն՝ փաստացիորեն ստեղծելով ռազմական դրություն:

Սոցիալական վիճակի վատթարացումը պարարտ հող նախապատրաստեց բանվորների շրջանում սոցիալիստական գաղափարների տարածման համար: Բաքվում ձևավորվեցին առաջին սոցիալիստական խմբակները կամ կազմակերպությունները, որոնք հեռու էին իրական քաղաքական կուսակցություն լինելուց և, ըստ էության, տվյալ շրջանում չէին էլ կարող նման ուժ ձևավորել՝ մեծ մասամբ հանդիսանալով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (այսուհետ՝ ՌՍԴԲԿ) ճյուղավորում: Բանվորական շարժմանը քաղաքական բնույթ տալու նպատակով 1901 թ. ստեղծվեց

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն (Багирова, 1997, 21): Կոմիտեի կազմում սկզբնապես չէր ընդգրկվել որևէ տեղացի թաթար գործիչ: Միայն 1902 թ. կոմիտեին անդամակցեց Ա. Ախունդովը, այնուհետև՝ Մ. Էֆենդիևը, Մ. Ազիզբեկովը: Գոյության առաջին շրջանում այս կոմիտեն զբաղվում էր հիմնականում դասախոսություններով և համապատասխան գրականության տարածմամբ, կադրերի պատրաստմամբ ու փորձելով իր շարքերը գրավել որքան հնարավոր է մեծ թվով բանվորների: Այս նպատակով ստեղծվեց և՛ ընդհատակյա տպարան, և՛ մասնաճյուղեր այլ բնակավայրերում: Սակայն Բաքվի կոմիտեին սկզբնական շրջանում չհաջողվեց իր կողմը գրավել լայն զանգվածների, հատկապես թաթարների շրջանում: Հարկ է նշել, որ 1904 թ. դրությամբ Բաքվի բանվորների 24,7 %-ը ռուսներ էին, 19,1 %-ը՝ հայեր, 12,6 %-ը՝ կովկասյան թաթարներ, 11,2 %-ը՝ լեզգիներ, 3,7 %-ը՝ կազանյան թաթարներ, 22,2 %՝ պարսիկներ (Раевский, 1930, 42)[1]: Էական ազդեցություն չունեցավ նաև ազգային հարցի շուրջ ՌՍԴԲԿ 1903 թ. պառակտումը հավանաբար այն պարզ պատճառով, որ ինքնավարական կամ անկախական որևէ ձգտում արևելակովկասյան մահմեդականների շրջանում դեռևս գոյություն չուներ, և դա բացատրելի էր մի շարք հանգամանքներով, որոնցից առաջնայինը *ազգային* միասնության գաղափարի բացակայությունն էր («*ազգային*» բնութագրումն օգտագործում ենք խիստ վերապահումով):

Բաքվի կոմիտեին հաջողվեց ակտիվ գործունեություն ծավալել տնտեսական անկման պայմաններում: Սակայն 1902-1903 թթ. կոմիտեի ղեկավար կազմում կովկասյան թաթար ազգաբնակչության ներկայացուցիչները դարձյալ բացակայում էին: Կոմիտեի աշխատանքների ղեկավարմամբ զբաղվում էին Տ. Ենուկիձեն, Ա. Ենուկիձեն, Լ. Դումբաձեն, Ի. Բոլկվաձեն, Ս. Թոդրիան, Վ. Մգալաձեն, Ի. Ստուրուան և այլք: Այս մասին է վկայում նաև սենատոր Կուզմինսկին: Ցարին ներկայացրած իր զեկույցում նա գրում է, որ 1902-1905 թթ. Բաքվում տեղի ունեցած հեղափոխական բոլոր գործողությունների համար հարուցված դատական գործերում ընդգրկված է եղել ընդամենը մեկ թաթար (Кузминский, 1905, 46): Սակայն սենատորը մանրամասնորեն հիշատակում է այն բոլոր կոչերը, որոնք Բաքվի կոմիտեի կողմից ուղղվել են Բաքվի մահմեդականությանը: Այսպես՝ 1904 թ. դեկտեմբերի 13-ի Բաքվի Մահմեդական սոցիալիստական կոմիտեի կողմից տարածված թռուցիկում գրված էր. «Հայերը, ռուսները, վրացիները, հրեաները բղավում են, իսկ դու անգամ չես մտածում, թե ինչու են նրանք այդպես վարվում» (Кузминский, 1905, 46): Մահմեդական ինչ-որ կոմիտեների կողմից տարածված նման այլազան թռուցիկների օրինակները բազմաթիվ են, սակայն Բաքվի ոստիկանության կողմից ո՛չ կոմիտեները և դրա անդամները, ո՛չ էլ տպարանը չբացահայտվեցին: Սա առիթ է տալիս կարծելու, որ դրանք տպագրվում էին հենց Բաքվի կոմիտեի կողմից՝ ստեղծելով մահմեդական ինչ-որ կազմակերպության գոյության պատրանք:

Որպես հեղափոխական պայքարում թաթարների պասիվության պատճառ սենատորը նշում է մահմեդական հոգևորականների կոչը՝ հավատարիմ մնալու ցարիզմին: Զեկույցն ավարտվում է հետևյալով. «Միայն թե չի կարելի պնդել, որ մահմեդական

[1] Հետաքրքրական է մեր կողմից նկատված մեկ փաստ ևս. Ի. Ս. Բագիրովան իր աշխատության մեջ Բաքվի բանվորների ազգային կազմը ներկայացնելիս շուրջ 45 %-ը վերագրում է «ադրբեջանցիներին» (Багирова, 1997, 28), մինչդեռ այդ հավանական 45 % «ադրբեջանցի» բանվորների մեջ մտնում էին լեզգիներ, պարսիկներ և մահմեդական այլ ազգություններ: Առավել արժանահավատ ենք համարում Ա. Ռանսկու հաղորդած տվյալները, քանի որ նրա աշխատությունը տպագրվել է 1930 թ., երբ ազգաշինության գործընթացները Խորհրդային Ադրբեջանում չէին հասել համահարթեցնող չափերի:

զանգվածը մշտապես կմնա անհաղորդ սոցիալիստական և այլ քաղաքական ուսմունքների գաղափարներին: Սակայն ուշագրավ է նրանց ակտիվ մասնակցությունը 1904 թ. դեկտեմբերից մինչև 1905 թ. մայիս ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած գործադուլներին, և հնարավոր է, որ այդ մասնակցությունը սոցիալական շարժման ճանապարհի առաջին փուլն է» (Кузминский, 1905, 49): Հենց այդ շրջանում շատ ավելի հաջող գործունեություն ծավալեց 1904 թ. հոկտեմբերին ստեղծված մեկ այլ կազմակերպություն՝ «Հյումմեթը» («Hümmət» – «Ջանք»): Ամենայն հավանականությամբ այս կազմակերպության համար հիմք է դարձել 1902 թ. Մ. Է. Ռասուլզադեի և նրա համախոհների ստեղծած «Ադրբեջանի երիտասարդ հեղափոխականների խմբակը» (Məmmədov, 1999, 60): Կան նաև կարծիքներ, որ «Հյումմեթը» ստեղծվել է Բաքվի կոմիտեի կողմից: Այս մասին Ռաևսկին գրում է. ««Հյումմեթը» սերտորեն կապված էր ընդհանուր բոլշևիկյան կազմակերպության հետ՝ հանդիսանալով Բաքվի կոմիտեի մասնաճյուղը» (Раевский, 1930, 60): Սակայն գերագնահատելով «Հյումմեթի» դերը՝ ժամանակակից ադրբեջանցի հետազոտողների կարծիքով «այն իր մեջ միավորել է մարքսիզմը թուրքական ազգայնականության և պանիսլամիզմի հետ և գործել է ՌՍԴԲԿ-ից անկախ» (Багирова, 1997, 29): Ժամանակակից գրեթե բոլոր ադրբեջանական հրապարակումներում այս կազմակերպությունը համարվում է «Ադրբեջանում առաջին *ազգային* սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը» (Azərbaycan Xalq Cümhuriyyəti Ensiklopediyası, 2004, 460), որի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր «ադրբեջանցի» մտավորականներին (Seyid-zade, 2011, 38): Սակայն շատ ավելի հավանական է, որ ստեղծված լինելով Բաքվի կոմիտեի ոչ անմիջական նախաձեռնությամբ և ղեկավար կազմում ունենալով ազգությամբ կովկասյան թաթարների, որոնք «հարաբերականորեն անկախ» գործունեություն էին ծավալում, այս կազմակերպությունը նպատակ ուներ շատ ավելի «մտերմիկ» գործունեությամբ սոցիալ-դեմոկրատական գաղափարները տարածելու թաթարների առավել լայն շրջանակներում: Այս եզրահանգումը կարելի է փաստել հետևյալով. Բաքվի կոմիտեն չէր կարող ստեղծել առանձին կազմակերպություն ազգային սկզբունքով, քանի որ բոլշևիկներն իրենց կազմակերպական աշխատանքում առաջնորդվում էին տարածքային սկզբունքով, իսկ թաթարների շրջանում Բաքվի կոմիտեի գործունեությունը անարդյունավետ էր, ուստի անհրաժեշտ էր մեկ այլ՝ «առանձին» կազմակերպություն, որը կկենտրոնանար հենց թաթարների շրջանում հեղափոխական գաղափարների տարածման վրա: Այս մասին է վկայում Ս. Էֆենդիևի հաղորդումն այն մասին, որ «Հյումմեթի» ստեղծման առաջին օրերին դրա ղեկավար կազմում եղել են Ի. Ստալինինը, Ս. Շահումյանը և Ա. Ջափարաձեն՝ երկու վրացի ու մեկ հայ (Касемзаде, 2010, 30): Գուցե սրանով է հնարավոր բացատրել նաև 1906 թ. Ստալինի պահանջը՝ միանալ ՌՍԴԲԿ-ին՝ հակառակ դեպքում սպառնալով փակել կազմակերպությունը (Багирова, 1997, 30): Այնուհետև կազմակերպության շարքերը համալրվեցին թաթարներով. Ս. Էֆենդիևը, որը եղել է նաև Բաքվի կոմիտեի կազմում, Մ. Մամեդյարովը, Ս. Մովսումովը, Մ. Հաջինսկին, Մ. Ռասուլզադեն և այլք: Իր գործունեությամբ «Հյումմեթին» հաջողվեց իր կողմը գրավել ոչ միայն մեծ թվով թաթարների, այլ նաև պարսիկների:

«Հյումմեթն» ուներ գործունեության երկու հիմնական ուղղություն. առաջին՝ գործել համաձայնեցված Բաքվի կոմիտեի հետ գործադուլների ու բանվորական ելույթների հարցում, երկրորդ՝ հոդվածներով ու հրապարակումներով հանդես գալ տեղական մամուլում՝ շոշափելով բնակչությանը հուզող հարցերը: Կազմակերպությունը հրատարակում էր համանուն թերթ, որը, փաստորեն, առաջին կուսակցական օրգանն էր: Սակայն այն փակվեց 1905 թ. հունվարին ռուսական ոստիկանության կողմից՝ պատճառաբանվելով վնասակար հրապարակումներով, որոնց բովանդակությունը մեծ մասամբ հայտնի չէր՝ բացառությամբ Մ. Է. Ռասուլզադեի մեկ հոդվածի, որը տպագրվել է 1905 թ. թերթի երրորդ համարում:

«Մարդու քաջությունը սարեր կշարժի» վերնագրով հոդվածում Մ. Է. Ռասուլզադեն գրում է. «Երիտասարդներիս մի մասը ազգայնական, մյուսը՝ դեմոկրատ, երրորդը՝ աթեիստ, չորրորդը՝ կրոնական խմբերի է բաժանվել: Այսպես խումբ-խումբ բաժանվելով՝ մեզնից յուրաքանչյուրն իր ճանապարհն է անցնում, բայց մենք դաշնակցել չենք ուզում: «Մարդու քաջությունը սարեր կշարժի» խոսքն է բոլորիս լեզվին, որի իմաստը եթե անգամ սրտով ընդունենք, միասնական երբեք չենք լինում: Բոլորս, հասարակության մի անկյունում ապրելով, եթե անգամ տարբեր ճանապարհներ ենք անցնում, պիտի միավորվենք: Եթե ազգայնականությունն է մեզ հարմար, բոլորս ազգայնական լինենք, եթե դեմոկրատիան, դեմոկրատ լինենք, խոսքը և գործը մեկ դարձնենք» (Rəsulzadə, 2014, 25-26): Իրավ, դժվար է այս խոսքերի մեջ սոցիալական կամ դասակարգային միասնության երանգ գտնել, ինչին պետք է, որ միտված լիներ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը:

«Հյումմեթ» թերթի փակումից հետո, որպես հետևանք 1905 թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստի[2], լույս տեսան մի քանի այլ թերթեր՝ «Դեվեթ-քոջ» («Dəvət-qoc» – «Կոչ»), որը հրատարակվեց 1906 թ. մայիսից մինչև օգոստոս հայերենով և կովկասյան թյուրքերենով՝ նպատակ ունենալով հաշտեցնել բախումների մեջ գտնվող ժողովուրդներին, այնուհետև՝ «Իրշադ» («İrşad» – «Ուղղորդում»), «Թեքամլյու» («Təkamlü» - «Էվոլյուցիա»), «Յոլդաշ» («Yoldaş» – «Ընկեր») թերթերը: «Հյումմեթ» թերթը վերատպվեց միայն 1917 թ. Բաքվում Ն. Նարիմանովի խմբագրությամբ (Yagublu, 2013, 18):

Բաքվից բացի՝ «Հյումմեթ» կուսակցությունն իր մասնաճյուղերը ստեղծեց Թիֆլիսում, Նախիջևանում, Ելիզավետպոլում և այլ վայրերում: Հատկապես ակտիվ էր Թիֆլիսի մասնաճյուղի գործունեությունը, որին օժանդակում էին վրաց մենշևիկները: «Հյումմեթ» կուսակցությունը, գործունեության ակտիվության վերելքներով և անկումներով հանդերձ, իր գոյությունը շարունակեց մինչև 1920 թ., երբ Ադրբեջանը խորհրդայնացվեց, և սկսվեց սոցիալ-դեմոկրատիայի գործունեության բոլորովին այլ փուլ:

Ազատական հոսանք: Մինչև ազատական հոսանքի գաղափարներին ու գործունեությանն անդրադառնալը անհրաժեշտ ենք համարում պարզաբանել XX դարասկզբի Արևելակովկասի մահմեդական մտավորականության էությունը և ընդգծել առանցքային տարբերությունը նախորդ շրջանի մտավորականությունից:

[2] 1905 թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստը, որի հեղինակը Ս. Վիտտեն էր, առաջին փորձն էր պետության քաղաքացիներին առավել լայն քաղաքացիական իրավունքներ տալու: Այն հռչակում էր խոսքի, հավաքների ազատություն, հասարակական կազմակերպությունների և միությունների ստեղծման իրավունք: Մանիֆեստը Պետական դումայի ընտրություններին մասնակցելու համար ընտրական իրավունք էր տալիս հասարակական առավել լայն շրջանակների և ազդարարում էր ժողովրդավարական ազատությունների սկիզբը, որոնք անհրաժեշտ էին պետական նոր կարգի ստեղծման համար:

Արևելյան Այսրկովկասի մահմեդականների շրջանում առաջացած
քաղաքական հոսանքները XX դարի սկզբին
The Emergence of Political Currents Among the Muslims of
Eastern Transcaucasia in the early 20th century

XIX դարի երկրորդ կեսին առաջացած մահմեդական մտավորականությունը առաջնորդվում էր լուսավորչական գաղափարներով: Սկսած Մեհմեդ Ֆաթալի Ախունդովից՝ մտավորականները պայքարում էին աշխարհիկ կրթության տարածման, այբուբենի բարեփոխման, սեփական լեզվով մամուլ ունենալու համար, որի արդյունքը եղավ դարավերջին մի քանի պարբերականների հրատարակումը՝ «Էքինչի» («Əkinçi»), «Զիյա» («Ziya»), «Քեշքյուլ» («Kəşkül»), որոնք գրաքննությամբ փակվեցին, երբ դրանցում երևացին էթնիկ ինքնության որոշարկման խնդիրներին վերաբերող հոդվածներ:

XIX դարավերջի մտավորականությունը բավարարվում էր Արևելյան Այսրկովկասի մահմեդականների քաղաքակրթական հետամնացության հարցերի բարձրաձայնմամբ՝ առանց որևէ քաղաքական երանգավորման: Մինչդեռ XX դարասկզբին առաջ եկավ մտավորականության որակապես նոր խավ, որը միևնույն հարցերի բարձրաձայնումն իրականացնում էր քաղաքական գաղափարախոսությունների ու շարժումների համադրմամբ: Որպես այդպիսին հանդես էին գալիս պանիսլամիզմի, պանթյուրքիզմի գաղափարախոսությունները, Ռուսական կայսրության ներքին քաղաքական շարժումները, առաջացած կուսակցությունները, ինչպես նաև ազգամիջյան հարաբերությունների պարբերական բարդացումները:

Ռուսաստանում 1905 թ. սկսված հեղափոխությունը լայն հնարավորություններ տվեց մահմեդական ազատականությանը՝ ազատորեն բարձրաձայնելու մահմեդականների ու քրիստոնյաների իրավահավասարության, կրթության բարելավման և այլ խնդիրների մասին: Դրան նպաստեցին երկու իրողություններ՝ Համամահմեդական շարժման ծավալումը Ռուսաստանում և Ռուսական սահմանադրական դեմոկրատական կուսակցության (այսուհետ՝ Կադետական) գործունեությունը Բաքվում, որոնք ինչ-որ պահի համադրվեցին:

Եթե սոցիալ-դեմոկրատական հոսանքի առաջացումն ուղղակիորեն կապված էր Բաքվում ՌՍԴԲԿ-ի կողմից ստեղծված Բաքվի կոմիտեի գործունեության հետ, ապա Կովկասում ազատական հոսանքի որոշակի կազմակերպական բյուրեղացումը առնչվում էր Կադետական կուսակցության՝ Բաքվում ծավալած գործունեությանը: Կուսակցությունը ձևավորվեց Ռուսաստանում 1905 թ. ծավալված հեղափոխության պայմաններում: 1905 թ. հոկտեմբերի 12-18-ը Մոսկվայում տեղի ունեցավ կուսակցության հիմնադիր համագումարը: Կուսակցությունն իրեն հայտարարեց բնույթով «վերդասակարգային»: Ընդունվեցին նաև ծրագիրն ու կանոնադրությունը (Степанов, 2006, 77): Կադետական կուսակցությունն առաջնորդվում էր քաղաքացիական իրավունքների պաշտպանության սկզբունքով, ձգտում էր Ռուսաստանի բոլոր քաղաքացիների իրավահավասարությանը՝ անկախ սեռից, կրոնից ու ազգությունից:

Ահա նման գաղափարներն են, որ դեպի իրենց ձգեցին Արևելյան Այսրկովկասի մահմեդական մտավորականության ազատական ներկայացուցիչներին, որոնց դե ֆակտո առաջնորդը Ա. Մ. Թոփչիբաշևն էր: Ազատական հոսանքը մեծ ոգևորություն ապրեց 1905 թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստի հռչակած քաղաքացիական ազատությունների կապակցությամբ: Իր ոգևորությունը Ա. Մ. Թոփչիբաշևը հայտնում է իր իսկ խմբագրությամբ

լույս տեսնող «Каспий» թերթում տպագրված հոդվածում. «Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը հատկապես թանկ է մահմեդականների համար: Այստեղից հետևություն, որ մահմեդականները պետք է միանան ռուսական հասարակության առաջադիմական տարրերին և նրանց հետ միասին պահպանեն քաղաքացիական ու քաղաքական ազատությունները՝ նկատի ունենալով, որ մահմեդական զանգվածի երջանկությունն ու բարեկեցությունը սերտորեն կապված են ռուս ժողովրդի երջանկության և բարեկեցության հետ» (Тобчибашев, 2004, 309): Սա կարելի է համարել հետագայում Կադետական կուսակցությանը միանալու քննարկման գաղափարական հիմք:

Բաքվում 1906 թ. հունվարի 7-ին ստեղծվեց Կադետական կուսակցության մասնաճյուղը, որի բյուրոյի կազմում ընդգրկվել էին Ա. Թոփչիբաշևը, Մ. Ալիբեկովը և Ի. Հաջինսկին: Կադետների ազգային ծրագրի հիմնական պահանջը Ռուսական կայսրության մաս կազմող ազգությունների մշակութային ինքնորոշումն էր կամ ազգային-մշակութային ինքնավարություն տրամադրումը: Սակայն ազատական շրջանակներում մեծ էր հիասթափությունը սկիզբ առած ռեակցիոն գործընթացից, երբ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հռչակած ազատությունները մնացին թղթի վրա: Այս մասին Ա. Թոփչիբաշևը գրում է. «Այնքան մեծ էր հիասթափությունն այն ժամանակ, երբ այսքան արագ պարզ դարձավ, որ ուրախությունը՝ ներշնչված ազատության վերաբերյալ լուրից, վաղաժամ էր, անցողիկ» (Тобчибашев, 2004, 385):

Ազատական շարժման ծավալումը, սակայն, չպետք է դիտարկել միայն Կովկասում Կադետական կուսակցության գործունեության լույսի ներքո: Կար մեկ այլ հզոր շարժում, որը ղեկավարվում էր Ղրիմի թաթարների կողմից և հետապնդում էր համառուսաստանյան մահմեդականների միավորման նպատակ: Լինելով ռուսական տիրապետության տակ անցած առաջին էթնիկ թյուրքական խումբը՝ նրանք ձգտում էին ավանդականորեն պահել առաջնությունը Ռուսաստանի մահմեդականների շրջանում ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ տնտեսական առումով (Swietochowski, 1985, 47): Սակայն եթե Ղրիմի թաթար մտավորականությունն առաջնորդվում էր համաիսլամականության գաղափարներով, ապա կովկասյան թաթարներին հուզում էին առավել նեղ տարածաշրջանային խնդիրները:

Այնուհանդերձ, 1905 թ. օգոստոսին հնարավոր եղավ Նիժնի Նովգորոդում հրավիրել մահմեդականների Համառուսաստանյան առաջին համագումարը («Մահմեդական Միություն» – «İttifaqı müsəlman»), որին մասնակցում էին 15 պատվիրակներ Ղրիմից, Հյուսիսային Կովկասից, Այսրկովկասից, Կազանից, Ուրալից, Թուրքեստանից ու Սիբիրից: Նրանք հիմնականում իրավաբաններ էին, ուսուցիչներ, առևտրականներ, հողատերեր: Համագումարը նախագահում էր պանթյուրքիզմի գաղափարախոսության հիմնադիր և «Թերջուման» («Tercüman» – «Թարգմանիչ») թերթի խմբագիր Իսմայիլ Գասպրինսկին, փոխխոսնակներն էին Ա. Մ. Թոփչիբաշևը և երկու հայտնի թաթար գործիչներ՝ Ռաշիդ Իբրահիմովն ու Յուսուֆ Ակչուրան: Համագումարի քննարկման հիմնական հարցերն էին Ռուսաստանի մահմեդականների կազմակերպական միավորումը, ներկայացուցչական մարմնով սահմանադրական միապետության ստեղծման համար պայքարը,

մահմեդականների ու Ռուսաստանի այլ ժողովուրդների իրավահավասարությունը, մշակութային և կրթական առաջընթացը (Swietochowski, 1985, 48-49):

Երկրորդ համագումարը տեղի ունեցավ Պետրոգրադում 1906 թ. հունվարի 13-23-ը անօրինական պայմաններում՝ առանց կառավարության թույլտվության (Seyid-zade, 2011, 61): Հենց այս համագումարի ժամանակ առաջին անգամ քննարկվեց Կադետական կուսակցության հետ միավորման հարցը:

Երրորդ և ամենակարևոր համագումարը կայացավ 1906 թ. օգոստոսի 16-21-ին դարձյալ Նիժնի Նովգորոդում: Համագումարը նախագահում էր Ա. Մ. Թոփչիբաշևը: Այն ընդունեց «Միության» ծրագիրը և որոշում՝ «Միությունը» վերածել քաղաքական կուսակցության: Ծրագիրը բաղկացած էր 11 բաժնից, 79 հոդվածից: Ընդ որում, «Միության» ծրագրի հիմքում ընկած էր Կադետական կուսակցության ծրագիրը (Seyid-zade, 2011, 64): Զուգահեռաբար բանակցություններ էին ընթանում Կադետական կուսակցության հետ միավորման և Պետական դումայի ընտրություններին միասնական դաշինքով մասնակցելու համար: Նման միավորմանը դեմ չէին նաև կադետները, քանի որ այն կարող էր ապահովել տեղական ընտրազանգվածի աջակցությունը:

Սակայն չի կարելի մտածել, թե ազատական գաղափարները լայն տարածում ունեին անգրագիտության բարձր մակարդակ ունեցող մահմեդական բնակչության շրջանում: Դրանք հիմնականում խմորվում էին մտավորական շրջանակներում, իսկ Ա. Մ. Թոփչիբաշևի և այլ մտավորականների անձնական հեղինակությունն ու ազդեցությունը կարող էին լրջորեն ազդել ընտրությունների ելքի վրա: Հետապնդած ազատական-հավասարարական գաղափարներից բացի՝ «Միության» ծրագիրն ուներ բավականին ընդգծված իսլամական բնույթ: 1906 թ. մայիսին տեղի ունեցած Առաջին Պետական դումայի ընտրություններում վեց մահմեդական գործիչների հաջողվեց պատգամավորական մանդատներ ստանալ: Դրանք էին՝ Ա. Մ. Թոփչիբաշևը, Ի. Զիյաթխանովը, Խ. Խասմամեդովը, Մ. Ալիևը, Ա. Մուրադխանովը, Ա. Հախվերդովը (Swietochowski, 1985, 50), որոնք Պետական դումայում ձևավորեցին մահմեդական դաշինքը:

Այնուհանդերձ, Կադետական կուսակցության հետ միավորում տեղի չունեցավ: Հավանաբար որոշակի տարաձայնությունների պատճառով Ռուսական առաջին Պետական դումայի փակումից հետո՝ 1906 թ. նոյեմբերի 23-ին, «Միությունը» հայտարարեց Կադետական կուսակցությունից առանձնանալու և Մահմեդական սահմանադրական կուսակցություն ստեղծելու մասին (Багирова, 1997, 142): Ստեղծվեց կուսակցության կենտրոնական կոմիտե, որը պետք է զբաղվեր կուսակցության գործունեության օրինականացմամբ և գալիք ընտրություններին պատրաստվելով: Սակայն Սենատը երկու անգամ մերժեց կուսակցությունը գրանցելու դիմումը: Փաստորեն՝ դրա գոյությունն օրինական չէր: Այդուհետ վերջինիս գործունեության մասին ոչինչ հայտնի չէ: Մինչդեռ մահմեդականների համառուսաստանյան համաժողովները շարունակվեցին հաջորդ տարիներին ևս, և դրանց նախկինի պես մասնակցություն ունեցան նաև Արևելյան Այսրկովկասի մահմեդական մտավորականության ներկայացուցիչներ: Սակայն այդ

շարժումը չուներ նեղ տարածաշրջանային նշանակություն, ինչին ձգտում էին Ա. Մ. Թոփչիբաշևը, Մ. Է. Ռասուլզադեն և այլք:

Ազգայնական հոսանք: Մինչև ազգայնական հոսանքի առաջացման խնդրին անդրադառնալը հարկ է նշել, որ XX դարասկզբին Արևելյան Այսրկովկասի թաթարների շրջանում չէր կարող գոյություն ունենալ, այսպես կոչված, «մաքուր ազգայնականություն», քանի որ վերջիններս՝ որպես առանձին էթնոս, դեռևս չէին ձևավորվել: Նրանք գտնվում էին էթնոհամախմբման միջանկյալ փուլում՝ հստակորեն գիտակցելով իրենց պատկանելությունը առաջին հերթին մահմեդական աշխարհին, ապա՝ թյուրքական, հետո միայն որոշակիորեն տեղայնացված ցեղային: Նման դրությունը պարարտ հող նախապատրաստեց պանթյուրքիզմի ու պանիսլամիզմի գաղափարների տարածման համար:

Եթե սոցիալիստական և ազատական հոսանքների առաջացումն Արևելյան Այսրկովկասում հետևանք էր տնտեսական ճգնաժամի, հեղափոխական շարժումների, ռուսաստանյան կուսակցությունների՝ Կովկասում ծավալած գործունեության, ապա ազգայնական բնույթի առաջին շարժումների ու կուսակցությունների առաջացումն ուղղակի հետևանք էր հայ-թաթարական բախումների:

Այս բախումները, որոնք սկիզբ առան 1905 թ. հեղափոխության պայմաններում ցարական վարչակարգի հրահրմամբ և հեղափոխական շարժումը ջլատելու մտադրությամբ, հետևանք էին միանգամից մի քանի պատճառների՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլն: Նախորդ տարիների գոլիցինյան հակահայկական քաղաքականությունը, հայկական եկեղեցական գույքի բռնագրավման մասին օրենքը և դրա դեմ տարված համառ պայքարը, ինչպես նաև ազատագրական պայքարն Արևմտյան Հայաստանում ու այն Կովկաս տեղափոխելու հավանականության նկատմամբ Ռուսական կայսրության վախը բարդացրել էին ցարական վարչակարգի հետ հայության հարաբերությունները: Կովկասում տասնամյակներով ցարիզմի հենարանը եղած հայությունը կանգնեց այդ դերի փոփոխման խնդրի առաջ, իսկ որպես նոր հավակնորդ հանդես եկավ Այսրկովկասի մահմեդականությունը՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Ըստ Թ. Սվիետոխովսկու՝ «հայ-թաթարական պատերազմն առաջին անգամ առաջացրեց համերաշխություն մահմեդականների շրջանում՝ հաղթահարելով տեղային ու ցեղային մասնատվածությունը, և այդ ժամանակից նման բաժանումը դադարեց խոչընդոտ լինել քաղաքական գործողություններում» (Swietochowski, 1985, 42): Նման պատճառահետևանքային փոխազդեցությամբ առաջացած քաղաքական գործունեությունն իր մեջ մեծ վտանգներ էր պարունակում նաև Ռուսական կայսրության համար, քանի որ ներծծված էր պանթյուրքիզմի ու պանիսլամիզմի ծայրահեղական գաղափարներով:

1905 թ. ամռանը Ելիզավետպոլում ստեղծվեց «Հեյրաթ» («Hayrət» – «Պատիվ») կուսակցությունը, որը ղեկավարում էին Ա. Ռաֆիբեկովն ու Ա. Խասմամեդովը: Աշխարհագրորեն մոտ լինելով Վրաստանին՝ Ելիզավետպոլում ստեղծված այս կազմակերպությունն իր վրա մեծապես կրում էր վրացական «Սաքարթվելո» անջատողական ազգայնական կազմակերպության ազդեցությունը: Իր ծրագրում կուսակցությունն առաջ էր քաշում Կովկասի՝ Ռուսաստանից անջատման և դաշնային

հիմունքներով պետության ստեղծման, մահմեդականների թվային գերակշռությամբ շրջաններում ինքնավարության տրամադրման խնդիր (Муханов, Волхонский, 2007, 9):

1905 թ. հունիսին Բաքվում լույս տեսավ մահմեդական իրականության մեջ մի նոր լրագիր՝ «Հեյաթ» («Həyat» – «Կյանք»), որի հրատարակման թույլտվությունը Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովից ստացել էր Ա. Մ. Թոփչիբաշևը: Թերթի հրատարակումը ֆինանսավորում էր Ղ. Զ. Թաղիևը, խմբագիրներն էին Ահմեդ Աղաևն ու Ալի Հուսեյն-զադեն: Վերջին երկու գործիչների ուժերի համատեղումը մեկ գործում աներկբայորեն վկայում է թերթի պանիսլամական ու պանթյուրքական բնույթի մասին: Միայն տիտղոսաթերթի «Թուրքերեն իսլամական լրագիր» վերտառությունն արդեն իսկ վկայում էր հայ-թաթարական բախումների ամենաթեժ պահին լույս տեսած այս լրագրի նպատակադրման մասին: Ա. Հուսեյն-զադեն առաջինն էր Արևելակովկասի մահմեդականներից, որը տարածեց վերջիններիս շրջանում թյուրքիզմի քաղաքական տեսությունը՝ քարոզելով թյուրքական միասնության ու թուրանականության գաղափարները՝ կենտրոնում ունենալով Օսմանյան կայսրությունը (Балаев, 2009, 20): Իսկ Ա. Աղաևը ժամանակի ամենահայտնի պանիսլամիստներից մեկն էր, ով համոզված էր, որ «մենք՝ գայլի բնավորություն ունեցող մահմեդականներս, գառնուկի մորթի մեջ մտանք», ուստի անհրաժեշտ էր վերադառնալ կրոնական հիմքերին՝ «գայլի բնավորությանը»: Հենց առաջին համարում որպես գլխագրի պարզաբանում գրված էր. «Մենք մահմեդականներ ենք և ցանկանում ենք մեր հավատակից եղբայրների առաջընթացը, մենք սրտանց ողջունում ենք նրանց զարգացումը՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք աշխարհի որ անկյունում են ապրում: Մենք թուրքեր ենք և հետևաբար ցանկանում ենք զարգացում, առաջընթաց ու ուրախություն աշխարհի բոլոր թուրքերին» (Seyid-zade, 2011, 49):

«Հեյաթի» առաջին համարներին բավականին մանրամասն անդրադառնում է հայկական «Մուրճ» ամսագիրը: Թերթի բնույթի մասին «Մուրճ» ամսագրում գրված է հետևյալը. «Հէյաթը՝ նեղ ազգայնական, աւելի ճիշտ կրօնական հողի վրայ է կանգնած: Յայտնի է, թե որքա՛ն խորը տգիտութեան մէջ է գտնուում մահմեդական հասարակութիւնը. արդ, այդ անգիտակից մութ բնազդներով գործող հասարակութիւնը նոր կեանքի պատրաստելու համար անհրաժեշտ է ոչ թէ նացիոնալիստական, կրօնական քարոզ, այլ զուտ մարդկայնական, քաղաքակրթական յորդոր: Իսկ «Հէյաթի» վարիչները անդադար կրկնում են, որ նրանք թուրք են և թուրք էլ պիտի մնան, թե մահմեդականությունից դուրս նրանց համար փրկութիւն չկայ: «Հէյաթը» իր հրապարակախօսության հիմքը չի դնում մաքուր ազգայնութեան հողի վրայ, այլ նացիօնալիզմի, այսինքն յարձակողական ազգասիրութեան ճահճի մէջ» (Տիգրան Զաւեն, «Մուրճ», 7. 1905, 7):

Թեև «Հեյաթի» առաջին համարը ներծծված էր ափսոսանքով հայ-թաթարական բախումների առնչությամբ, սակայն հաջորդ համարներն աչքի են ընկնում այդ բախումները սրելու անուղղակի մտադրությամբ: Մասնավորապես թերթում տպագրվում են հայկական «Մշակ» թերթից հոդվածներ, որոնց բովանդակությունը մեկնաբանվում է թշնամական դիրքերից: Օրինակ՝ «Մշակում» տպագրվել է հետևյալ հաղորդումը Գողթնի Ալահին գյուղի դրության մասին՝ «Ալահին այլևս գոյութիւն չունի... Ալահու եկեղեցին սրբապղծուած է,

եկեղեցու մէջ շատ արիւն է թափված: Սրբազան անօթները և զգեստները կողոպտուած են: Խաչն ու սկիհը գլխներին դրած թուրքերը պարելով են հեռացած» (Շմաւօն, «Մշակ», 05.06.1905, 3), որը «Հեյաթում» մեկնաբանվում է հետևյալ կերպ. ««Մշակ» լրագրի միմիայն ստութեան համար գրած այն լուրը, թե մահմեդականները եկեղեցիի և ուրիշ սուրբ բաների, ինչպէս, օրինակ, աստուածային խօսք Աւետարանի մասին վատ արարքների մէջ են գտնուել, իհարկէ, ոչ մի մահմեդական չի հավատայ, սրանց բոլոր զրպարտութիւններ են: Մահմեդականը՝ իսլամական կրօնքի տեսակէտով սուրբ եղող եկեղեցու նկատմամբ, Աստուա՛ծ չանէ, որ լրբութիւններ անէ» (Տիգրան Զաւեն, «Մուրճ», 7. 1905, 7, 140):

Հայ-թաթարական բախումների ընթացքում՝ 1906 թ. կեսերին, ձևավորվեց նաև մեկ այլ կուսակցություն՝ «Դիֆայի» («Difayi» – «Պաշտպանություն»): Նման կազմակերպության ստեղծման գաղափարը պատկանում էր Ա. Աղաևին: Կուսակցության ստեղծման նախապատմությունը կապվում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի նախաձեռնած հաշտեցման համագումարի հետ, որին մասնակցում էին Ա. Մ. Թոփչիբաշևը, Ա. Աղաևը, Ի. Զիյաթխանովը և այլն: Հանդիպման ժամանակ Ի. Զիյաթխանովը նշել է, որ եթե «Դաշնակցությունը» չվերացնի հայկական զինված խմբերը, իրենք ևս ստիպված կլինեն ստեղծել իրենց ջոկատները (Багирова, 1997, 165): Հատկանշական է, որ որպես բախումների մեղավոր թաթարները մեղադրում էին «Դաշնակցությանը», մինչդեռ հանդիպմանը մասնակցած դաշնակցականները՝ ռուսական վարչակարգին: «Դաշնակցության» գործունեությունն ու «հակադաշնակցական» պայքարը մեծապես նպաստեցին համանման կազմակերպության առաջացմանը:

1906 թ. հոկտեմբերին Բաքվում, Թիֆլիսում, Ելիզավետպոլում հայտնվեցին թռուցիկներ, որոնք հայտնում էին «Կովկասյան համամահմեդական պաշտպանության կոմիտե – Դիֆայի» ստեղծման մասին: 1906 թ. հոկտեմբերի 13-ին «Իրշադ» թերթում տպագրվեց «Դիֆայի» կուսակցության հայտարարությունը, որում մասնավորապես ասված էր. «Արդեն երկու տարի է, ինչ Կովկասի մահմեդականները, նրանց ունեցվածքը վտանգի տակ են: Այս ամենը ներքոհիշյալի հետևանքն է՝ հայ-մահմեդական բախումների, երկրորդ՝ մեր ժողովրդի հետամնացության ու անտեղյակության, վերջապես երրորդ՝ մահմեդականների՝ գնալով խորացող սոցիալ-բարոյական անկման: Մահմեդականներին այս վտանգներից փրկելու համար կառավարության վրա հույս դնելն անիմաստ է: Կառավարության «պաշտոնյաները», հատկապես պարոն Ի. Վորոնցով-Դաշկովի փոխարքայությանը նախորդած շրջանում, «Դաշնակցության» պայթուցիկների ու գնդակների առաջ վախով գլուխ խոնարհելով, այդ կազմակերպության ձեռքին գործիք են դարձել» (Yaqublu, 2012, 33): Կուսակցության կենտրոնական կոմիտեն գտնվում էր Բաքվում, անդամներն էին Ա. Աղաևը, Կ. Կարաբեկովը, Հ. Հաջինսկին, Ի. Աշուրբեկովը: Այն իր մասնաճյուղերը ստեղծեց Ելիզավետպոլում, Շուշիում և այլուր: Կուսակցության անդամների թիվը կազմում էր ավելի քանի 1000 մարդ, որը, մյուս կուսակցությունների համեմատ, բավական մեծ էր: Կուսակցության գաղափարներում գոյություն ունի հստակորեն ընդգծված հակահայկականություն: Կուսակցության երկլեզու թռուցիկներում «Դաշնակցությունը» մեղադրվում էր պետական մարմինների հետ համագործակցելու ու մահմեդական բնակչության սպանդ կազմակերպելու մեջ (Seyid-zade, 2011, 70-71): 1907 թ. ընդունվեց կուսակցության ծրագիրը, որը բաղկացած էր 53 կետից: Հիմնական նպատակն

էր հասնել մահմեդականների միասնությանը՝ շարիաթի օրենքների խստիվ պահպանմամբ: Այստեղ մենք կրկին տեսնում ենք Ա. Աղաևի պանիսլամիստական գաղափարների ամենաուղղակի ազդեցությունը: 1908 թ. կուսակցության գործունեությունը թուլացավ, ինչը կապված էր Ա. Աղաևի աքսորի հետ: Այդուհանդերձ, այն իր գոյությունը շարունակեց մինչև 1917 թվականը:

1907 թ. մայիսին Ելիզավետպոլում ստեղծվեց «Մուդաֆիե» («Müdafiyə» – «Պաշտպանություն») կազմակերպությունը, որի հիմնադիրն էր Ի. Վեքիլովը: Այս կազմակերպությունն առաջին հայացքից ապաքաղաքական էր թվում, քանի որ դրա հիմնական նպատակներն էին՝ հովանավորել կրթության ու մշակույթի զարգացումը, պատժել նրանց, ովքեր կխախտեն օրենքը, արդարությունն ու ազնվությունը: Նրանք, ովքեր մեղավոր կլինեն ազգի անհաջողության մեջ, չեն կարող խուսափել դաժան պատժից (Seyid-zade, 2011, 75): Կազմակերպությունը ստեղծեց նաև իր զինված ջոկատները: Եվ չնայած դրան՝ Ծ. Աղայանն այս կազմակերպության մասին գրում է. «1907 թ. Բաքվում հիմնադրված «Մուդաֆիե» բուրժուա-ազգայնական կազմակերպությունը սերտ կապերի մեջ էր երիտթուրքերի հետ և պայքարում էր, այսպես կոչված, մուսուլմանական ավտոնոմիայի համար՝ Թուրքիայի հովանավորության տակ» (Աղայան, 1976, 237):

Այդուհանդերձ, XX դարասկզին Արևելյան Այսրկովկասում անհամեմատ մեծ դեր ու ազդեցություն ունեցավ «Մուսավաթ» («Müsavat» – «Հավասարություն») կուսակցությունը: Այն ստեղծվեց 1911 թ. հոկտեմբերի սկզբներին: «Մուսավաթի» հիմնադիրներն էին Թաղը Նաղըօղլուն, Մեհմեդ Ալի Ռասուլօղլուն ու Աբբասղուլու Կազըմզադեն: Իսկ որպես «Մուսավաթի» հայտնի առաջնորդ՝ Մեդմմեդ Էմին Ռասուլզադեն այդ ժամանակ արտաքսվել էր Ռուսաստանից և գտնվում էր Ստամբուլում: Նա միացավ կուսակցությանը 1913 թ.՝ էապես ազդելով կուսակցության գաղափարների վրա: «Մուսավաթի» ստեղծման մասին Մեհմեդ Ալի Ռասուլօղլուն հետագայում գրում է, որ Ա. Կազըմզադեի խանութի ներքնահարկի սենյակում գաղտնի հանդիպման ժամանակ Նաղըօղլուն ասել է. «Վրացիները, հայերը, ռուսներն իրենց քաղաքական կուսակցություններն ունեն, մենք ինչո՞ւ չունենք, մենք էլ պիտի մի կուսակցություն ստեղծենք» (Yaqublu, 2012, 36): «Մահմեդական դեմոկրատական կուսակցություն – Մուսավաթը» ստեղծվեց որպես գաղտնի կազմակերպություն և, ըստ էության, մնաց ընդհատակում մինչև 1917 թվականը:

Կուսակցության առաջին ծրագիրը բաղկացած էր 8 կետից: Դրանք էին. 1. բոլոր մահմեդականների միավորում՝ առանց ազգության և կրոնական տարբերությունների, 2. աշխատել անկախությունը կորցրած մահմեդական երկրների վերանկախացման համար, 3. սեփական անկախությունը պաշտպանել կամ էլ վերականգնել ձգտող բոլոր մահմեդական երկրներին նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ, 4. օգնել մահմեդական ժողովուրդներին և երկրներին պաշտպանողական ու հարձակողական ուժերի ամրապնդման գործում, 5. այս գաղափարներին խանգարող բոլոր խոչընդոտները վերացնել, 6. մահմեդականների միավորմանը և առաջընթացին ձգտող բոլոր կողմերի միջև կապեր հաստատել, 7. մարդկության երջանկությանն ու առաջընթացին ձգտող օտար կուսակցությունների հետ անհրաժեշտ մակարդակի կապեր հաստատել, 8. ձգտել

մահմեդականների կյանքի համար պայքարի միջոցների, նրանց առևտրի, արդյունաբերության և ընդհանուր առմամբ տնտեսական կյանքի ուժեղացմանը (Yaqublu, 2012, 38): Ինչպես նկատում ենք, առաջին ծրագիրն ունի համաիսլամական բնույթ և Արևելյան Այսրկովկասին վերաբերող որևէ մասնավորեցում դրանում չկա:

«Մուսավաթի» գործունեությունն առավել ակտիվացավ 1913 թվականից հետո, երբ Ռոմանովների արքայատոհմի իշխանության հաստատման 300-ամյակի առթիվ տրված համաներմամբ Ռուսական կայսրություն վերադառնալու իրավունք ստացավ Մ. Է. Ռասուլզադեն: Նրա անմիջական անդամակցությունն էապես փոխեց «Մուսավաթի» կողմնորոշումը: Որպես քաղաքական վտարանդի Իրանում, ապա Ստամբուլում լինելը զգալիորեն ազդել էին Ռասուլզադեի գաղափարների վրա: Նա առաջ էր քաշում ոչ այնքան համաիսլամական, որքան *ազգային* գաղափարներ: Սակայն իրական «ազգայինի» բացակայությունը այն ստեղծելու և ապա հանրայնացնելու անհրաժեշտություն էր առաջացնում: 1915 թ. նա հրատարակեց «Աչըք սյոզ» («Açıq söz» – «Ազատ խոսք») պարբերականը, որում լույս տեսնող իր հոդվածներում աստիճանաբար զարգացնում էր տեղային կենտրոնացվածության ու ազգային գիտակցության ստեղծման գաղափարները, սակայն որոշակի ինքնավարության կամ անկախության մասին խոսվեց միայն 1917 թ.: 1914-1915 թթ. Բաքվում լույս տեսած «Դիրիլիք» («Dirilik» – «Կենսունակություն») ամսագրում հրատարակված «Միլլի Դիրիլիք» («Milli dirilik» – «Ազգային կենսունակություն») հոդվածաշարում նա, ազգի խնդիրները և ազգի կազմավորման գործոնները վերլուծելով, ստեղծեց Մուսավաթ կուսակցության նոր ծրագրի հիմքում ընկած տեսությունը (Mirza-bala, 1938, 75): Ռասուլզադեն նախևառաջ տարբերություն է դնում «*ումմա*» (մահմեդականների համայնք) ու «*ազգ*» բառերի միջև՝ փորձելով «անջատել» համաիսլամական գիտակցությունից և տեղայնացնելով զարգացնել ոչ թե զուտ կրոնական, այլ ժամանակակից իմաստով ազգային գիտակցություն՝ հիմնված կրոնի, լեզվի, մշակույթի, պատմության, սովորույթների ու ավանդույթների միասնության գիտակցման վրա (Rəsulzadə, 2001, 468):

1917 թ. փետրվարյան հեղափոխությամբ սկսվեց «Մուսավաթի» համար գործունեության նոր՝ որակապես ավելի ակտիվ ու համարձակ փուլ:

Եզրակացություններ: Այսպիսով՝ համառոտ վերլուծության ենթարկելով XX դարասկզբին Արևելյան Այսրկովկասի թաթարների շրջանում գաղափարական հոսանքների առաջացումը՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին. դրանք, մի կողմից, համակայսերական սոցիալ-տնտեսական, քաղաքական, հեղափոխական ներքին ցնցումների արձագանք էին, մյուս կողմից՝ տարածաշրջան ներթափանցած պանիսլամիզմի ու պանթյուրքիզմի գաղափարների տարածման հետևանք, որոնց արդյունքը, ի դեմս հայ-թաթարական բախումների, եղավ հակահայկականության ձևավորումը՝ որպես համախմբման ևս մեկ կարևոր հուցք՝ սկիզբ տալով տեղական ծագման ազգայնական բնույթի առաջին կազմակերպությունների առաջացմանը:

Ի տարբերություն նախորդ շրջանի մտավորականության, որը գործում էր բացառապես լուսավորության տարածման գաղափարի շրջանակներում և հնարավորություն չուներ քաղաքական գործունեություն ծավալելու, XX դարասկզբին առաջ եկած երիտասարդ մտավորականությունը քաղաքականացվեց՝ ոչ միայն անդամակցելով ռուսաստանյան տարբեր կուսակցությունների, այլև մասնակցելով հարևան

Պարսկաստանում ու Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին՝ փոխառելով ոչ միայն գաղափարներ, այլ նաև փորձ: Թաթարների մշակութային հետամնացության, դպրոցների բացման, սեփական լեզվով կրթության, իրավահավասարության հարցերը շարունակում էին մնալ առաջնային գրեթե բոլոր կուսակցությունների ծրագրերում:

Այդուհանդերձ, վստահաբար կարող ենք նշել, որ առաջացած գաղափարական հոսանքներից ու կուսակցություններից և ոչ մեկն իր ծրագրում անկախացման կամ պետության ստեղծման միտք չէր արտահայտում, և առավելագույն քաղաքական պահանջը, այն էլ՝ միայն հեղափոխության շրջանում, հանգում էր մշակութային ինքնավարությանը: Չնայած դրան՝ քաղաքական ինչ-ինչ հոսանքների անդամակցության հարցում երիտասարդ մտավորականները հաստատակամությամբ աչքի չէին ընկնում: Միևնույն գործիչը կարող էր հարել մեկ այս կամ մեկ այն հոսանքին, թղթակցել միանգամից մի քանի ուղղվածության պարբերականների:

Հասարակական լայն շերտերի շրջանում ընկալվածության առումով շատ բան հնարավոր չէ եզրակացնել՝ բացառությամբ նրա, որ գրագիտության չափազանց ցածր մակարդակ ունեցող այդ հանրույթին քաղաքական գաղափարները միշտ չէ, որ հասու էին, և զանգվածները գնում էին անհատների, այլ ոչ թե գաղափարական կոնկրետ համոզմունքների հետևից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Ծ. (1976),** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., ԳԱ հրատ, 869 էջ:
2. «Մշակ», 05. 06. 1905, № 110:
3. «Մուրճ», 07. 1905, № 7:
4. **Багирова И. (1997),** Политические партии и организации Азербайджана в начале XX века, Баку, «ЕЛМ», с. 336.
5. **Балаев А. (2009),** Мамед Эмин Расулзаде (1884-1955), М.: «Флинта», с. 288.
6. **Кузминский А. (1905),** Всеподданнейший отчет о произведенной в 1905 году, по высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии, Санкт-Петербург, с. 686.
7. **Муханов В., Волхонский М. (2007),** По следам Азербайджанской Демократической Республики, М.: «Европа», с. 247.
8. **Раздорский Е. А. (2016),** Экономический кризис 1900-1903 гг.: Историческая практика и экономические уроки, «Гуманитарные науки», № 7, Иваново: «Икспресс», с. 48-51.
9. **Раевский А. (1930**), Большевизм и меньшевизм в Баку в 1904-1905 г.г., Баку, «АзГНИИ», с. 247.
10. **Степанов С. А. (2006),** Кадеты (конституционно-демократическая партия), М., Вестник РУДН, № 8, с. 75-84.
11. **Тобчибашев А. (2014),** Журналистская деятельность 1898-1914, I том, Баку, «АДА», с. 576.
12. **Seyid-zade D. (2011),** Azerbaijan in the Beginning of XX Century: Roads Leading to Independence, Baku, «ОКА», 344 p.
13. **Swietochowski T. (1985),** Russian Azerbaijan, 1905-1920, Cambridge University press, 256 p.

14. **Mirza-bala M. Z. (1938),** Milli Azerbaycan Hareketi: Milli Az. Müsavat halk frakası tarihi, Berlin, Firka divani Tarafindan neşrolunmuştur, s. 335.
15. **Azərbaycan Xalq Cümhuriyyəti Ensiklopediyası (2004),** I cild, Bakı, «Lider nəşriyy», s. 440.
16. **Məmmədov X. (1999),** Aydınlarımızın istiqlal mücadiləsi, Bakı, «Biznes Universiteti», s. 86.
17. **Rəsulzadə M. Ə., (2014),** Əsərləri, I cild (1903-1909), Bakı, «Təhsil», s. 480.
18. **Rəsulzadə M. Ə., (2001),** Əsərləri, II cild (1909-1914), Bakı, «Şirvannəşr», s. 528.
19. **Yagublu N., (2013),** Məhmməd Əmin Rəsulzadə ensiklopediası, Bakı, Kitab Klubu, s. 504.
20. **Yaqublu N., (2012),** Müsavat partiyasının tarixi, Bakı, «ADİOĞLU», s. 335.

REFERENCES

1. **Aghayan Ts. (1976),** Hay zh'oghovrdi azatagrakan payk'ari patmut'yunits', JEr., GA hrat, 869 ēj:
2. «Mshak», 05. 06. 1905, № 110:
3. «Murch», 07. 1905, № 7:
4. **Bagipova I. (1997),** Politichjeckije paptii i opganizacii Azjepbaйdzhana v nachalje XX vjeka, Baku, «JELM», c. 336.
5. **Balajev A. (2009),** Mamjed Emin Paculzadje (1884-1955), M.: «Flinta», c. 288.
6. **Kuzminckiй A. (1905),** Vcjepoddannjeйshiй otchjet o ppoizvjedjennoй v 1905 godu, po vycochaйshjemu povjeljeniju, cjenatopom Kuzminckim pjevizii gopoda Baku i Bakinckoй gubjepnii, Cankt-Pjetjepbupg, c. 686 .
7. **Muxanov V., Volxonckiй M. (2007),** Po cljedam Azjepbaйdzhanckoй Djemokpatichjeckoй
8. Pjecpubliki, M.: «JEvpopa», c. 247.
9. **Pazdopckiй JE. A. (2016),** Ekonomichjeckiй kpizic 1900-1903 gg.: Ictopichjeckaja ppaktika i ekonomichjeckije upoki, «Gumanitapnyje nauki», № 7, Ivanovo: «Ikcppjecc», c. 48-51.
10. **Pajevckiй A. (1930**), Bol'shjevizm i mjen'shjevizm v Baku v 1904-1905 g.g., Baku, «AzGNII», c. 247.
11. **Ctjepanov C. A. (2006),** Kadjety (konctitucionno-djemokpatichjeckaja paptija), M., Vjectnik PUDN, № 8, c. 75-84.
12. **Tobchibashjev A. (2014),** ZHupnalictckaja djejatjel'noct' 1898-1914, I tom, Baku, «ADA», c. 576.
13. **Seyid-zade D. (2011),** Azerbaijan in the Beginning of XX Century: Roads Leading to Independence, Baku, «OKA», 344 p.
14. **Swietochowski T. (1985),** Russian Azerbaijan, 1905-1920, Cambridge University press, 256 p.
15. **Mirza-bala M. Z. (1938),** Milli Azerbaycan Hareketi: Milli Az. Müsavat halk frakası tarihi,
16. Berlin, Firka divani Tarafindan neşrolunmuştur, s. 335.
17. **Azərbaycan Xalq Cümhuriyyəti Ensiklopediyası (2004),** I cild, Bakı, «Lider nəşriyy», s. 440.
18. **Məmmədov X. (1999),** Aydınlarımızın istiqlal mücadiləsi, Bakı, «Biznes Universiteti», s. 86.
19. **Rəsulzadə M. Ə., (2014),** Əsərləri, I cild (1903-1909), Bakı, «Təhsil», s. 480.
20. **Rəsulzadə M. Ə., (2001),** Əsərləri, II cild (1909-1914), Bakı, «Şirvannəşr», s. 528.
21. **Yagublu N., (2013),** Məhmməd Əmin Rəsulzadə ensiklopediası, Bakı, Kitab Klubu, s. 504.
22. **Yaqublu N., (2012),** Müsavat partiyasının tarixi, Bakı, «ADİOĞLU», s. 335.

Ներկայացվել է՝ 23.03.2022	Received 23.03.2022	Получено: 23.03.2022
Գրախոսվել է՝ 01.08.2022	Reviewed 01.08.2022	Рассмотрено: 01.08.2022
Ընդունվել է՝ 25.08.2022	Accepted 25.08.2022	Принято: 25.08.2022

E-mail: anushharutyunyan97@mail.ru